ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3 հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

_____N _____

Ձեր N _____

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻ ՄԵՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ
էլ.փոստ meriegevorgyan@yahoo.com

Հարգելի Մերի Գևորգյան

Ի պատասխան 2019 թվականի սեպտեմբերի 26-ի Ձեր հարցման, տեղեկացնում եմ հետևյալը.

Հարց 1. Պապիլոմավիրուսի դեպքում կա ցուցում առանց հետազոտելու կատարել պատվաստում, և որ ԲԿ-ում են կատարում պապիլոմավիրուսի անալիզ, այն հայտնաբերելու նպատակով:

Պատասխան՝ մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ պատվաստումների իրականացման համար նախապես պապիլոմավիրուսային վարակի նկատմամբ հետազոտությունը պարտադիր չէ (հղում՝ http://pharm.cals.am/pharm/data/drug_123143/151306401564.pdf): Մարդու պապիլոմավիրուսային վարակի նկատմամբ հետազոտությունները կատարվում են համապատասխան հագեցվածություն ունեցող լաբորատորիաներում:

Հարց 2. ՀԻԲ պատվաստանյութը կիրառելուց հետո քանի տոկոս է նվազել շնչառական օրգանների հիվանդությունները:

Պատասխան՝ Հեմոֆիլուս ինֆլուենզա Բ տիպով հարուցված հիվանդություններից առավել ծանր են ընթանում մենինգիտները՝ ուղեղի թաղանթի բորբոքումները, որոնց գրեթե 50%-ն ավարտվում է հաշմանդամությամբ կամ մահացությամբ: Այդ է պատճառը, որ ՀԻԲ բաղադրիչով /հեմոֆիլուս ինֆլուենզա Բ տիպ/ պատվաստումների

արդյունավետության գնահատման համար Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն առաջարկում է իրականացնել մանրէային մենինգիտների դետքային համաճարակաբանական հսկողություն: Հայաստանում ՀԻԲ բաղադրիչով հնգավալենտ պատվաստումների ներդրման արդյունքում հեմոֆիլուս ինֆլուենզա Բ տիպով պայմանավորված մենինգիտները նվազել են մոտ 3 անգամ:

Հարց 3. ՀՀ-ում որքան հեպատիտ Բ և Ց հիվանդներ կան և նրանցից քանիսն են ստանում դեղորայք:

Պատասխան՝ ՀՀ-ում առկա հեպատիտ Բ-ով և Ց-ով հիվանդների մասին տեղեկատվությունը յուրաքանչյուր ամիս ներկայացվում է Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կայք-էջում (https://www.armstat.am/am/), որտեղ անհրաժեշտ տեղեկատվությունը կարելի է ներբեռնել անցնելով՝ «հրապարակումներ», որից հետո՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թվականի հունվար-հուլիսին», այնուհետև՝ «5.1. Առողջապահություն» բաժիններով՝ (https://www.armstat.am/file/article/sv_07_19a_510.pdf):

2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Վրաստանի կառավարությունը Հայաստանին նվիրաբերել է 3000 տուփ «Սովալդի» դեղամիջոց, որը տրամադրվել է շուրջ 1000 հեպատիտ Ց-ով հիվանդների: Ներկա պահին առողջապահության նախարարությունը հեպատիտ Ց և հեպատիտ Բ հիվանդությունների բուժման համընդհանուր գործընթաց չի իրականացնում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ 2020 թվականին Հայաստանի Հանրապետությունում նախատեսվում է իրականացնել քրոնիկ հեպատիտ Ց-ի և Բ-ի անվճար բուժում հակավիրուսային դեղորայքով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող՝ Պիրիջիդա Սիմոնյան
ԱՆ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
հեռ. 010 550601